Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ



ԱՎԱՉԱԿ ՅԵՂԲԱՅՐՆԵՐ

ՊԵՏՀՐԱՏ

Ե. Ա. ՊՈՒՇԿԻՆ

891.71-93
Պ
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԱՎԱՋԱԿ ՅԵՂԲԱՅՐՆԵՐ

Ա 4181
1267

ՊԵՏՀՐԱՏ

ՀԼԿՅԵՄ Կ.Կ. ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԵԵՐԵՎԱՆ 1937

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՄԱԿԱԴԵՄԻԱ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

1

Այն յերամը չեր սև ագռավների
Իջել քայքայվող վոսկրակույտերին,
Վոլգայից այն կողմ, խարույկի չորս դին,
Խումբն եր հավաքվել չրջմոլիկների։
Ինչպիսի՞ խառնուրդ դեմքի, ըզգեստի,
Յեղերի, լեզվի և ունեցվածքի,
Հյուղերից մթին, խուցերից բանտի
Յեկել են նրանք հանուն վաստակի։
Այստեղ ամենքի նպատակն է մեկ
Ապրում են նրանք ազատ, անորենք.
Աչքի յեն ընկնում ահա նրանց մեջ՝
Նա, վոր փախել է Դոնից ռազմատենչ,
Յեվ նրանք՝ հրյան դանդուր, սևահեր,
Տատարստանների վայրի վորդիներ,
Ղալմուխն ու բաշկիրն այլանդակ, տգեղ,
Շիկահեր Ֆիններ և միչտ տեղից տեղ
Պարապ ծուլությամբ թափառող դնչուն։
Արյուն, և վտանգ, և խաբեություն
Կապն են ահավոր այդ ընտանիքի.
Նա յե նրանցը, ով հոգով իր քար
Անցել է ամեն աստիճան վոճրի,

Նա, ով մորթում է ձեռքերով իր սառ
Այրի կնոջն ու վորբուկին թշվառ,
Ծաղրով է նայում մանուկի լացին,
Ով չի խնայում, յերբեք չի ներում,
Ում սպանությունն է խնդություն բերում,
Ինչպես տեսության ժամը սիրածին:

2

Լռեց ամեն ինչ: Լուսինը դժգույն
Իր լույսն եր սփռում նրանց յերեսին,
Ցեվ գավաթը լի գինով վերփրուն
Անցնում է մեկի ձեռքից մյուսին:
Ահա տարածված կոշտ, խոնավ գետնին
Ննջում են վոմանք խավարում գիշատ.
Ցեվ յերազներն են ահա չարիմաստ
Սավառնում նրանց հանցավոր գլխին:
Վոմանց եվ գրույցն հանդարտ ու կամաց
Կարճում են պարապ ժամը գիշերի...
Ցեվ ահա խումբը չրջան բոլորած
Զրույցն է լսում մի նոր յեկվորի:

3

«Մենք յերկուս եյինք: Ցեղբայրս և յես:
Մեկտեղ աճեցինք: Պահեց, սնեց մեզ,
Մեր մանկությունը—ընտանիքն ոտար:
Մեր մանուկ կյանքում ուրախ որ չկար:
Արդեն գիտեյինք ճայնը կարիքի,
Դառն արհամարանք կրեցինք մենք շատ
Ցեվ վաղ վրդովվեց մեր մանուկ հոգին
Դաժան նախանձի տանջանքն անընդհատ:

Վոչինչ չմնաց վորբերիս համար
Վոչ հո՛ղ, վոչ խրճի՛թ. մանուկ հասակից
Հոգսի մեջ եյինք ու միշտ վշտահար.
Վերջը ճանձրացանք մեր այդ վիճակից:
Համաձայնության յեկանք միմյանց հետ,
Փորձելու մի այլ վիճակ այսուհետ:
Ընկեր ընտրեցինք մեզ համար ընդմիշտ
Գիշերը Խավար և դաշույնը սառ,
Մոռացանք ընդմիշտ և յերկչանք, և վիշտ,
Խիղճն ել մեզանից վանեցինք խստառ»:

4

Ա՛խ, ջահելություն դու բուռն ու կարիճ.
Մեր կյանքն այն պահին լավ եր և ուրախ,
Ցերը մեր կորուստը հեղնելով անվախ,
Մենք կիսում եյինք մեր մեջ ամեն ինչ:
Ու յերբ վոր պայծառ լուսինն եր ծագում
Շրջում ու կանգնում յերկնի մեջտեղում,
Թագաւից դեպի մենք անտառը խոր
Գնում արհեստին մեր վտանգավոր
Ու սպասում եյինք ծառի հետեվում՝
Չի՞ դալիս արդյոք ճանապարհով մութ
Եղճուկ քահանա, կամ հարուստ ջհուդ,
Կողոպտում եյինք, ամեն ինչ տանում:
Ցերբեմն ել խորին գիշերով ձմռան,
Նորից յեռաձի մեր կառքը լծած,
Մենք յերդում, սուլում ու նետի նման
Ձյան շեղջերն եյինք կտրում սրընթաց:

Ո՞վ չեր սարսափում մեր հանդիպումից....
Հենց վոր տեսնեյինք մի լույս պանդոկից,
Այնտեղ ենք արագ, անհապաղ թռչում,
Բաղխում ենք արագ, անհապաղ կանչում,
Ձրի ուտում ենք, խմում ու յերգում,
Վառ աղջիկներին փաղաքշում, դրկում»:

4

Յեվ ի՞նչ: Քաջերը վերջապես ընկան,
Շատ չտեվեցին քեֆերը նրանց:
«Ու մեզ բռնեցին·— դարբիններն յեկան
Ինձ ու յեղբորս դամեցին միմյանց:
Պահակն էլ տարավ մեզ բանտը մթին»:

5

«Յես ավագն էյի ու մեծ հինգ տարով,
Տանջանքն առավել տարա, հաղթեցի:
Հեղձուկ ոդի մեջ, կապված շղթայով,
Նա ուժից ընկավ, յես վողջ մնացի:
Ծանր շնչելով, թախծից հալ ու մաշ,
Տենդի մեջ յեղբայրս գլուխն իրեն քաշ
Ծանր հենելով իմ ուսին, մաշվում,
Մեռնում էր, հաճախ կրկնելով այսպես՝
«Ծանր է ինձ ոդը··· անտառն եմ ուզում...
Ջուր ինձ, ջուր տվեք···» իզուր, իզուր յես
Հեգ տատապյալին ջուր էյի մեկնում:
Բայց նա տանջվում էր կրկին ծարավից,

Քրտինքն էր հոսում անվերջ վրայից։
Արյունն ու միտքն էր նրա բորբոքում
Տանջալի ջերմը թունավոր ցավի։
Յեվ նա այլևս ինձ չէր ճանաչում
Ու ամեն վայրկյան իր մոտ էր կանչում
Մի այլ ընկերոջ, այլ բռնեկամի։
Զառանցում էր նա՝ «դու ո՞ւր հեռացար,
Ո՞ւր ծածուկ ճամբաղ քեզ առաջնորդեց,
Ինչո՞ւ յեղբայրս ինձ մենակ թողեց,
Հեղձուկ ոգի մեջ այս բանտում խավար։
Նա չե՞ր վոր խաղաղ վայրից ու կյանքից
Հրապուրեց դեպի անտառը մթին,
Գիշերով այնտեղ սովորեցրեց ինձ
Մարդասպանության վոճիրն առաջին։
Այժմ առանց ինձ լայնածիր, արձակ
Դաշտում շրջում է ազատ, համարձակ,
Լախտը ծանրաչարժ շարժում է ոդում,
Յեվ տարված բախտովն իր նախանձելի,
— Նա՛ ընկերոջն է մոռացել բանտում...»
Բռնկում էր մերթ նրա մեջ կրկին
Արթնացած խղճի կայթը տանջալի,
Ամրոխվում էին տեսիլքն ահռելի
Յեվ մատով նրան ըսպառնում հեռվից։
Այն խեղճ ծերուկին հաճախ ամենից,
Վորին մորթեցինք մեր ձեռքով մի որ,
Տեսնում էր իր դեմ նա մտամոլոր։
Հիվանդն աչքերը փակելով ձեռքով
Այսպես էր խնդրում ծերուկի համար՝

«Խնայիր նրա արցունքները ծով,
Յեվ որ ծերության մի սպանիր նրան,
Զառամյալ ճիչն է նրա սարսռալից...
Թող նրան, չկա վտանգ նրանից,
Չկա նրա մեջ տաք կաթիլ արյան.
Մի ծաղրիր ճերմակ մազերը նրա,
Մի տանջիր նրան... գուցե մեղմի նա
Մեզ համար աստծո գայրույթն աղոթքով»:
Յես լսում եյի, վախն իմ հաղթելով.
Կամեցա զսպել արցունքները այն,
Վանել նրանից զառանցանքն ունայն:
Տեսնում եր մեռած մարդկանց պարելիս,
Վոր խուլ անտառից բանտ եյին գալիս,
Շչուկն եր լսում նա մեռածների,
Մոտիկ գուիյունը հալածողների,
Յեվ ահաբեկված հայացքն եր շողում,
Մազերն եյին ցից կանգնում տեղի պես,
Նա, վորպես տերև, սարսում եր, դողում,
Թվում եր նրան՝ տեսնում է կարծես
Հրապարակներում մարդիկ խռնված,
Մահավայր տանող ահավոր ուղին
Յեվ խարազանը, և դահիճներին...
Անդգա, ահի դողով բռնված
Ընկնում եր յեղբայրը իմ կրծքին հաճախ:
Այդպես շատ որեր, գիշերներ անցան,
Չկար ինձ համար մի վայրկյան խաղաղ,
Մեր աչքերն քուն յերբեք չունեցան»:

6

«Ջահելությունը համառեց, հաղթեց,
Յեղբորս ուժերը կրկին յեկան հետ,
Նա առողջացավ ու վոտքի կանգնեց,
Սեվ մղձավանջը հեռացավ անհետ:
Հարություն առանք: Մեզ այն ժամանակ
Մեր նախկին կյանքի կարոտն եր մաշում,
Մթին անտառն եր նորից մեզ քաշում,
Մենք տենչում եյինք դաշտի ողն անհագ:
Նողկալի յեր մեզ խավարը բանտի,
Լույսը թափանցող վանդակից այն փակ,
Շղթայի ձայնը, կանչը պահակի,
Մեղմիկ շրշյունը սուրացող հավքի»:

7

«Յեվ շղթայակապ մի որ քաղաքում
Մենք վողորմություն եյինք հավաքում
Մեր քաղաքային բանտատան համար:
Յեվ վորոշեցինք լուության դրկում
Կատարել իրՁը մեր հին, մշտավառ:
Գետն եր այն կողմը վարար, աղմկում,
Մենք դեպի այնտեղ–բարձրաբերձ տիրից
Նետվում ենք ջուրը խոր, աղմկալից:
Շղթաներն են մեր ծանր հեծեծում,
Մեր պիրկ վոտքերով ալիքն ենք ծեծում,
Տեսնում ենք ահա ավազոտ կղզյակ,
Պատռում ենք դեպի ջրերը արագ

Այնտեղ ենք լողում։ Ցեվ մեր հետևից
Ձայներ ենք լսում՝ «բռնեցեք, փախան»։
Լողում են հեռվում յերկու պահապան,
Բայց կղզին ենք մենք արդեն վոտք դնում,
Մեր շղթաներն ենք քարով կոտրում,
Ծվենն ենք պատռում մենք մեր շորերի՝
Արդեն ծանրացած դետի ջրերից,
Հետապնդումն ենք տեսնում հետևից,
Սակայն նստում ենք յի հույսով արի
Ցեվ լուռ սպասում։ Մեկն ալիքներում
Սուզվում է արդեն, անքում, թուլանում
Ցեվ, վորպես արճիճ, ջրում չքացավ։
Մյուսը դետի խորությունն անցավ
Ձեռքին հրացան, լող տալով համառ,
Ցեվ նա աղաղակն չլսելով իմ,
Գալիս եր սակայն մոլեգին թափով.
Թռչում է նրա գլխին յերկու քար։
Արյունը հորդեց, դորչ ալիքներում
Նա սուզվեց—ու մենք նորից ջրերում
Լող տալով յելանք ափը փրկարար,
Մեզ հետապնդել չեղավ ել հնար,
Անտառ գնացինք։ Բայց յեղբայրս հեգ...
Պաղ ջուրը դետի, աչնան ցուրտ ու մեգ
Զրկեցին նրան վերջին ուժերից,
Կրկին ցավը հին նրան տապալեց
Ցեվ մղձավանջը այցելեց նորից։
Ցերեք որ մնաց նա լուռ մահիմերձ,
Քուն չեկավ յերբեք նրա աչքերին,

Բայց չորրորդ օրը սուզված մարքերում
Կանչեց ինձ տխուր ու ձեռքիս սեղմեց։
Յես տեսա նրա մարմոր հայացքում
Նրա թոթափող տանջանքը այն մեծ.
Դալկացած ձեռքը ցնցվեց իմ ձեռքում,
Հառաչեց նա խուլ ու կրծքիս նիրհեց։

8

«Սառած դիակի կողքին մնացի
Ու յերեք գիշեր չբաժանվեցի,
Սպասում էյի դեռ, գուցե հանկարծ նա
Աչքերը բանա, քնից արթնանա։
Յեվ դառը լացի։ Հետո վերջապես
Բահը ձեռքս առա ու չիրմի մոտ յես
Աղոթք կարդացի հոգով մեղսագին,
Հողին հանձնեցի հեգ յեղբորիս դին,
Ապա ամեհի իմ վորսին նախկին՝
Գնացի մենակ... ինձ համար սակայն
Տարիներն անցած էլ չկան, չկան։
Գիշերոթները, խնջույքներն ուրախ,
Ասպատակները անզուսպ ու անվախ
Բոլորը յեղբորիս չիրիմն է խլել,
Թափառում եմ յես մոայլ, միայնակ,
Քարացել է իմ հոգին դժնդակ,
Ու խիղճն է վաղուց իմ սրտում մեռել։
Բայց խորշոմներն եմ յերբեմն խնայում,
Ծերուկի մորթել սոսկում եմ հիմա.

Այժմ իմ ձեռքը էլ չի բարձրանում
Անպաշտպան, ճերմակ մազերի վրա։
Հիշում եմ ինչպես այն դաժան բանտում,
Շղթայով կապված յեղբայրս ուժասպառ,
Անզգա ընկած, թաղծոտ ու տրտում
Աղերսում էր ինձ ծերուկի համար»։

ՀԱՅՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

A 4181

Պատ. խմբագիր՝ Ս. Վահունի
Թարգմ. Ա. Ավետիքյանի
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ար. Գասպարյան

Գլավլիտի լիազոր՝ 4678. Հրատ. 4170. Պատվեր 1003.
Տիրաժ 3000. Թուղթ 72×110. Տպ. ½ մամ.
Մեկ մամուլում 40960 նիշ. Հեղինակային ½ մամուլ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ,
ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

5720

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039190

[034]

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

608

А I/4181

Пров. 1940 г.

А.С. ПУШКИН

БРАТЬЯ РАЗБОЙНИКИ

ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН